

Տողերուս շարունակութիւնն ունինք Սիմէոն Լեհացոյ Ուղեգրութեան կից տուած Տարեգրութեան մէջ, ուր կ'ըսուի (էջ 367) . «Եւ ասէ (Օսման սուլտան) ցմեծ վազիրն՝ Պայրամ փաշան . Գնա եւ զոր ինչ կամիս արա : Իսկ նա միջնորդ կալեալ զՕլախաց պարոնն, որ կոչէր Քասբար, եւ զայլս՝ առաքեն առ Վլատիսլաւուս որդի արքային վասն հաշտութեան : Ձոր յետ բազում երթեւեկութեանց՝ արարին ուխտ եւ զաշինս երգմամբ ընդ միմեանս . . . » :

Արդէն այս համեմատութիւնը Վիպասանութեան եւ Տարեգրութեան մէջ կարող է փաստ ծառայել, հաստատելու թէ Վիպասանութեան հեղինակը սերտ կապ ունի Տարեգրութեան հեղինակին հետ, մինչեւ իսկ պնդելու չափ թէ Տարեգրութեան հեղինակը Սիմէոն միաժամանակ հեղինակն է Վիպասանութեան : Կը հաստատեն զայս ոչ միայն պատմական բովանդակութեան նոյնաբան համաձայնութիւնը եւ զազափառաց նոյնութիւնը, այլ եւ գրութեան ժամանակը : Վիպասանութիւնը գրուած է 1634ին . նոյն տարին վերջին եղրն է նաեւ Տարեգրութեան գրութեան :

Երկու հեղինակներու նոյնութեան համար ներքին փաստեր ունինք ոչ միայն Տարեգրութեան մէջ, այլ եւ Սիմէոնի ուրիշ մէկ գրութիւնը՝ 1636 թուի Յիշատակարանը կուտայ մեզի կոուաններ, Սիմէոնի գրչին վերագրելու գրուածքս : Կը ներկայացնեմ հոս հետեւեալ համագրութիւնները :